ՀՖԿՍՊԻ

ARMENIAN FEDERATION MOUNTAINEERING & HIKING

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԱԼՊԻՆԻԶՄԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են զբոսաշրջության՝ ալպինիզմի և լեռնային տուրիզմի ոլորտում փոխադարձ համագործակցությունը.

Կարևորելով ուսանողների՝ պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը.

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը համատեղ կրթական, գործնական միջոցառումների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեքստում.

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Ինստիտուտը պատրաստակամ է զբոսաշրջության՝ալպինիզմի և լեռնային տուրիզմի ոլորտում պրակտիկ թեմաներ առաջարկել ուսանողներին՝ ամբիոններում և տեղերում հետազոտություններ իրականացնելու, իսկ «Ալպինիզմի եվ լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ Ֆեդերացիա) պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել հետազոտություն իրականացնող Ինստիտուտի սովորողներին:

2.2 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.2.1 Ֆեդերացիայում ուսանողների պրակտիկաների կազմակերպման միջոցով,

2.2.2 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.2.3 նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.2.4 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.2.5 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.2.6 սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, Ֆեդերացիայի տարածքների, գույքի օգտագործման միջոցով,

2.2.7 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման շուրջ,

2.2.8 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2021թ. հունիսի 17-ին:

4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ֆեդերացիա

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 11

Ռեկտոր՝ Դավիթ Խաչատրյան

ստորագրություն, Կ.Տ.

Ինստիտուտ

«Ալպինիզմի եվ լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Արցախի 1

Նախագահ՝ Սուրեն Դանիելյան

ստորագրություն, Կ.Տ.